

«Ուլիգամոր կանանց և երեխաների հիվանդանոց»  
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,  
+374 12345678

«Ուլիգամոր ընտանիքի առողջության կենտրոն»  
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան  
+374 12345677

[www.wigmore.am](http://www.wigmore.am)

ԱՍԹՄԱ


ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ  
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



  
**WIGMORE**

## ԻՆՉ Ե ԱՍԹՄԱՆ

Ասթման շնչուղիները ախտահարող հիվանդություն է: Այն համարվում է երեխաների շրջանում ամենատարածված քրոնիկ հիվանդություններից մեկը:



## ԻՆՉ ԱՆՏԱՆԻՇՆԵՐՈՎ Ե ԱՐՏԱՅԱՅՏՎՈՒՄ

Ասթմայի հետևանքով առաջանում են դժվարաշնչություն, խզգոցներ, կրծքավանդակում սեղմման զգացում կամ ցավ և առավելապես լուսաբացին արտահայտվող հազ: Այս ախտանիշները պարբերաբար կրկնվում են երեխայի մոտ: Սա տեղի է ունենում, քանի որ շնչուղիների պատը այտուցվում է բորբոքման հետևանքով, լուսանցքը նեղանում է և լցվում է լորձով:



## ԻՆՉՈՒ՞ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՍԹՄԱ

Ասթման առաջանում է գեների և շրջակա միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով: Հաճախ ասթմայով երեխայի ծնողները կամ մոտ բարեկամները նույնպես ունենում են ասթմա:



Քաշի ավելցուկ ունեցող երեխաների մոտ ասթմա առաջանալու հավանականությունը մեծանում է:

## ԻՆՉՊԵՍ Ե ԱՆՏՈՐՈՇՎՈՒՄ

- Բժիշկը տալիս է հարցեր գանգատների, հիվանդության պատմության վերաբերյալ,

- Բժիշկը գնում է երեխային,
- Բժիշկը շնչառության ֆունկցիայի գնահատում է կատարում (սպիրոմետրիա):

Սպիրոմետրը գործիք է, որի միջոցով գնահատում են երեխայի շնչուղիների աշխատանքը:

Հետազոտության ընթացքում երեխան պետք է փչի մուշտուկի միջոցով, բժիշկը կարող է խնդրել երեխային հանգիստ շնչել, խորը շունչ քաշել, ուժեղ փչել: Կարևոր է, որ երեխան ճիշտ կատարի բժշկի հրահանգները. դա է պատճառը, որ այս հետազոտությունը ովորաբար անցկացվում է 5 տարեկանից մեծ երեխաների մոտ:



## ՍՐԱՑՈՒՄ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ՝ ՏՐԻԳԵՐՆԵՐ

Անհրաժեշտ է բացահայտել և խուսափել տրիգերներից: Տրիգերը այն նյութն է, որը կարող է ազդել շնչուղիների վրա և սրացման պատճառ դառնալ: Տարածված տրիգերներ են ծխախոտի ծուխը, օծանելիքը, սուր հոտերը, ծաղկեփոշին, բորբոսը, եղանակային փոփոխությունները, վիրուսային վարակները, ֆիզիկական ակտիվությունը:



## ՃԱՆԱԶԵԼ ՍՐԱՑՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր ծնող պետք է ճանաչի ասթմայի սրացման նշանները՝ ժամանակին ճիշտ օգնություն ցույց տալու նպատակով: Ասթմայի սրացումը կարող է արտահայտվել դժվարաշնչությամբ, հազով, կրծքավանդակում սեղմման զգացողությամբ, սուլող խզգոցով շնչելու ժամանակ, սրտխփոցով:



## ԲՈՒԺՈՒՄ

Բուժման դեղերը հիմնականում տրվում են ինհալացիայի միջոցով:

Տարբերում են 2 խումբ դեղեր՝ արագ ազդող, որոնք օգտագործվում են ըստ անհրաժեշտության, և երկարատև կիրառվող հիմնական դեղեր, որոնք կանխում են ախտանիշների առաջացումը, նվազեցնում են շնչուղիների բորբոքվածությունը: Բուժման ընթացքում երկրորդ խումբ դեղերը պետք է օգտագործել ամեն օր, նույնիսկ երբ երեխան իրեն լավ է զգում:



Ասթմա ունեցող երեխաների մեծ մասի մոտ ախտանիշները կառավարելի են, նույնիսկ այն աստիճանի, որ սրացումները շատ հազվադեպ են լինում:

Ճիշտ բուժում ստանալու և հսկողության դեպքում երեխայի մոտ ախտանիշները կարող են չլինել և երեխան որևէ սահմանափակում չի ունենում:

Զի կարելի ինքնուրույն դադարեցնել նշանակված դեղորայքը:

Կարևոր է տեխնիկապես ճիշտ օգտագործել շնչելու համար նախատեսված դեղերը:

## ԱՍԹՄԱ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՑԻ ՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ասթմա ունեցող երեխայի մոտ պետք է առկա լինի ասթմայի վարման պլան, որտեղ նշվում է, թե



- ի՞նչ դեղի կարիք ունի երեխան և ե՞րբ պետք է օգտագործել,
- որո՞նք են երեխայի հիվանդության տրիգերները և ինչպե՞ս խուսափել դրանցից,
- ինչպե՞ս վարվել սրացումների ժամանակ:

## ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

- Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր տարի պատվաստել երեխային սեզոնային գրիպի դեմ:

## ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼ, ԵԹԵ ԵՐԵՒԱՑԻ ՄՈՏ ԱՌԿԱ Է՝

- արտահայտված դժվարաշնչություն,
- արագ ազդող դեղերի անարդյունավետություն: